Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի <<Կայանի Հովհաննես Հինդլյանի անվան միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ-ի <<Երաժշտության (5 դասաժամ) և <<Կերպարվեստի>> (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում ձև (1),

-1 լուսանկար 3 x 4 չափի,

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2024թ.-ի ապրիլի 17-ից մինչև մայիսի 2-ը** ներառյալ,ամեն օր՝ **ժամը 10:00-ից 15:00-ը**,բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ.-ի մայիսի 3-ին՝ ժամը 14:00-ին**,ՀՀ Տավուշի մարզի Կայանի Հովհաննես Հինդլյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ,գ.Այգեհովիտ ,45փողոց, 1-ին փակուղի,շենք 4:Տեղեկությունների համար զանգահարել **098352189** հեռախոսահամարով: